լաւներ ջուրն, կը դառնայ արեւելեան հարաւ, աստի 2 ժամէն կիջնայ ի դաշտ, աջ բաժանելով Ալաշկերտի և ձախ Խաշլուայ քաշանը,[1] իւր ուղղութեամբ կը շարունակուի դաշտի մէջ, կանցնի Մամատն և Սողանցիք գիւղերու արեւմուքից, Դաղի գիւղի արեւելքից, կը թափի Շեռեան։

Ալխալւքից քիչ ներքեւ այս ջուրը ևս կընդունի ձախ կողմից Աշանայ ջուրն։

4. Ամատ գետ, կամ Դիէտէ Մուրատի ջուր և կամ Կալոյի ջուր.—Այս ջուրը կսկսի Զամչէ մեծ և բարձր լերան արեւմտեան հարաւային կողերից, նախ նեղ քանի ձորակներով կսկսի, ապա տակաւ առ տակաւ ձորահովիտս կընդլայնի և կը ձգուի չորս ժամ արեւմտահարաւ. աջ կողմից կընդունի քանի մանր օժանդակներ և մեծ ճիւղն (Զաթայ ջուր), որ Բօզ-թէփէ լեռնէ ի հարաւ կը միանայ Կալոյի ջրին, կիջնայ։

Հանդէպ Զաթայ ջրի խառնուրդին ձախ կողմից կընդունի նաև Յովսոյի ջուրն, որ սա ևս Զամչէ լեռնէ կիջնայ։

Կալոյի ջուրն արեւմտահարաւ շարունակելով մինչև Դիէտէ Մուրատ[2] Մեծ քարայեռն որ կը մնայ ջրի եռանկեան միջավայրը, ուստի յանկարծ կը դառնայ արեւելահարաւ. աստի ի վայր Դիէտէ Մաքսուտ անուամբ ի դաշտ կը խոնարհի, դաշտից ևս Ամատայ ջուր

1. Գիւղի մը ամբողջ տարածութիւնը իւր սահմաններից ներս քաշան կասուի ըստ քրդաց.

2. Այս մեծ քարալերին գլուխը և ստորոտը ուխտատեղիներ կան Դէտէ Մուրատ և Մաքսուտ անունով, քրդեր շատ անգամ, երբեմն հայք ևս ուխտի կը գնան.